սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթաներին վերաբերող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ բազային տուրքի 100.000-ապատիկի չափով:

Հաշվի առնելով, որ հայցվորի կողմից նախապես վճարվել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակներում այլ դատական ծախսերի հետ կապված պահանջ չի ներկայացվել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Ռուսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերության հայցն ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության, երրորդ անձինք՝ «ՆՏԼ ՊՐԻԲՈՐ» ՍՊ ընկերության, «ԻՍՏՈԿ 34» ՍՊ ընկերության և «Երվադա» ՍՊ ընկերության՝ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.01.2023 թվականի նիստի թիվ 3.1 արձանագրությամբ «ՆՏԼ ՊՐԻԲՈՐ» ՍՊ ընկերության և «ԻՍՏՈԿ 34» ՍՊ ընկերության հայտերը բավարար գնահատելու, «ՆՏԼ ՊՐԻԲՈՐ» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու, «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով պայմանագիր կնքելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու և «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-175/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին «Ռուսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023 թվականին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**